«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան 0046, Բագրատունյաց 44, Հեռախոս 011 51 49 92, Էլ.փոստ՝ eltransport@yerevan.am

№ 180 18 մարտի 2025թ.

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

**«Լիր սթար» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Դավթյանին**

**Հարգելի Ա.Դավթյան,**

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի, (այսուհետ Գնորդ), և «Լիր սթար» ՍՊԸ-ի, (այսուհետ Վաճառող) միջև 2025թ. փետրվարի 18-ին կնքվել է համաձայնագիր,որով ուժի մեջ է մտել 2025թ. փետրվարի 11-ին կնքված № ԵԷՏ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը: Ելնելով վերոգրյալից, հայտնում ենք Ձեզ, որ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն հարկադրված է 2025թ մարտի 18-ից, Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ այն է՝ Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, և Համաձայն Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի՝ այն է՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի հիմքով՝ Գնորդը հրաժարվում է ապրանքից և Միակողմանի լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 630000(վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի և 420000(չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին («Ամիո բանկ» ՓԲԸ, ՀՀ 1150008870220100):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Լիր Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

**Տնօրենի ժ/պ՝** **Ս.Բեջանյան**

Կատ.՝ Գնումների բաժնի պետ՝ Ս.Հարությունյան
Հեռ.՝ 093 25 02 85